

**ՀՅՈՒՄԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ
ԿԻՍԱՆԿԱԽ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ (1750-1770-ԱԿԱՆ ԹԹ.)**

ՄԽԹԱՐՅԱՆ Գ. Ժ.

Հյուսիսարևելյան Այսրկովկասն իր ուրույն տեղն ուներ Շիրվանի բեկլարբեկության կազմում¹, ինչպես Սեֆյան Իրանի պետական համակարգում, այնպես էլ՝ Նադիր շահի գլխավորած պետության մեջ: Վերջինիս փլուզումից հետո (1747 թ.) թեև Քերիմ խան Չենդին հաջողվում է միավորել Իրանի մեծ մասը, սակայն Այսրկովկասը դուրս է մնում նրա քաղաքական ազդեցությունից²:

XVIII դ. երկրորդ կեսին այս տարածքում առաջանում են կիսանկախ խանություններ, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում Ռուսաստանի և օսմանյան կայսրության կողմից հավակնությունների դրսևորման համար³:

Խանությունների նոր տիրակալներ՝ կիսանկախ խաներ⁴ են դառնում Իրանական պետության նախկին նահանգապետերը, որոնք իշխանության էին եկել շահական կառավարման ժամանակ⁵ և փորձում էին ամրապնդել իրենց ինքնուրույնությունը: Մի շարք վայրերում (ինչպես, օրինակ, Ղուբայում) իրենց ժառանգական իշխանությունը պահպանում էին նաև տեղական տոհմիկ ազնվականները:

XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիսարևելյան Այսրկովկասում Ղուբայի խանությունը⁶ քաղաքականապես ամենաուժեղն էր, որը մինչև շահ Սուլեյմանի գահակալումը (1667-1694 թթ.) որպես առանձին օլթա⁷ չէր հիշատակվում⁸: XVIII

¹ Սեֆյան պետության մեջ Շիրվանի բեկլարբեկության կարևորության մասին է վկայում այն փաստը, որ տասներեք բեկլարբեկությունների ցանկում այն գրավում էր երկրորդ տեղը [Муххамад-Рафи Ансари. Дастан Ал-мулук (Устав для царей). Предисловие, перевод, примечания и указатели А. Б. Вильдановой, Ташкент, 1991, с. 26].

² Perry J. Karim Khan Zand (1747-1779). Chicago and London, p. 95-96.

³ Петрушевский И. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Л., 1949, с. 86-87.

⁴ Սեֆյան պետության կազմում խանի գործառնությունների մասին տե՛ս **Муххамад-Рафи Ансари**, նշվ. աշխ., էջ 21, *Россия и Европа глазами Оруж-бека Баята – Дон Жуана Персидского*, пер. с англ., введ., коммент. и указ. О. Эфендиева, А. Фарзалиева, СПб., 2007, с. 35.

⁵ Бакиханов А. Происхождение племен, населяющих ныне закавказские провинции (Кавказ, 1847, N 48, с. 8).

⁶ Ղուբայի խանության մասին տե՛ս **Minorsky V. Kubba**, *The Encyclopaedia of Islam*, Vol. 5, Leiden, E. J. Brill, 1986, p. 296-297.

⁷ Օլթան (թուրքերեն՝ երկիր) որպես ավատ տրվում էր քոչվոր ցեղերի առաջնորդներին և զինվորականներին՝ ամիրներին: Ամիրներն անհրաժեշտության դեպքում պարտավոր էին զորք տրամադրել կենտրոնական իշխանություններին: Այսպիսի ամիրներն իրավունք ունեին սեփական դրոշ ունենալու և զորաշարժերի

դ. սկզբին Ղուբայի խան է նշանակվում Ղարաղայթաղի⁹ տիրակալների՝ ուցմիների (դադստանյան տիրակալների տիտղոս) մաջալիսյան ճյուղի ներկայացուցիչներից: XVII դ. վերջին Ղայթաղի ուցմիների իշխանական տունը բաժանվում էր երկու ճյուղի: Նրանցից ավագների նստավայրը Մաջալիս գյուղն էր, իսկ կրտսերներինը՝ Վելիքենդը: Սովորաբար ուցմի էր դառնում մաջալիսյան ճյուղի ներկայացուցիչը (նստավայրը՝ Բաշլի): Սակայն երկու տոհմաճյուղերի միջև իշխանության համար ծավալված սուր պայքարի հետևանքով մաջալիսյան ամբողջ տոհմը սրի է քաշվում: Բեկերից մեկին հաջողվում է փրկել անչափահաս Հուսեյն խանին, որն ապաստանում է Թարքիի շամխալի մոտ: Չափահաս դառնալուց հետո նա ամուսնանում է Ռուդբարի (գտնվում էր Սադիանում) դազիի¹⁰ դստեր հետ, որից ծնված աղջիկը Սադիանի և Ռուդբարի սուլթանների նախամայրն էր: Որոշ ժամանակ անց Հուսեյն խանը ամուսնանում է Ղաջարների Զոհրա խանումի հետ, Սպահանում ձեռք է բերում մեծ ճանաչում և քաղաքական կապեր: Այս ամուսնությունից ծնված Ահմեդ խանը շահի կողմից ճանաչվում է որպես Ղուբայի խանության կառավարիչ՝ դառնալով Ղուբայի խաների տոհմի հիմնադիր¹¹: Ավանդույթի համաձայն, Ղուբայի խանը նշանակվում էր անձամբ շահի կողմից, շիա դավանանքի ներկայացուցիչներից՝ իշխանության ժառանգական սկզբունքով¹²:

Ղայթաղները կամ Ղարաղայթաղները «հնարնակ»¹³ դադստանյան ժողովուրդ են, դարգինների էթնիկ մի խումբ՝ հյուսիս-կովկասյան լեզվաընտանիքի

ու երթերի ժամանակ հատուկ թմբուկներով թմբկահարելու [Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտականք, պրակ առաջին (ԺԵ-ԺԶ), կազմից Հ. Փափազյան, Ե., 1956, էջ 123: Օլբան Թիմուրյանների օրոք գոյություն ունեցող խոշոր ավատ էր, որը տրվում էր կառավարման համար: Սեֆյանների ժամանակ այն տարածք էր, որը հատկացվում էր տարբեր սկզբունքներով: Օրինակ, տրվում էր թիուլի ձևով՝ ժամանակավոր և ցմահ իրավունքով, սոյուրդալ՝ ժառանգական ձևով՝ հարկային իմունիտետի (մուաֆի) հիմունքներով կամ տրվում էր կառավարման, սակայն առանց հարկային իմունիտետի իրավունքի (Петрушевский И., նշվ. աշխ., էջ 102-103)]:

⁸ Петрушевский И., նշվ. աշխ., էջ 140:

⁹ Ղարաղայթաղի մասին տե՛ս Wixman R. Kaytak, *The Encyclopaedia of Islam, Third Impression*, Vol. 4, Leiden, E. J. Brill, 1997, p. 846-847.

¹⁰ Սեֆյան պետական համակարգում բեկլարբեկությունների խոշոր քաղաքներում գոյություն ունեցող դազիների շահի տեղական շիա հոգևորականության առաջնորդի պաշտոնը (տե՛ս Петрушевский И., նշվ. աշխ., էջ 119):

¹¹ Ղուբայի խաների մասին տե՛ս նույն տեղում, էջ 140, Родословная таблица Кубинских ханов [Акты, собранные Кавказской археографической комиссией (ալուհետև՝ АКАК), Тифлис, т. 6, ч. 2, с. 907]; Березин И. Путешествие по Дагестану и Закавказью, Казань, 1849, с. 172; Бакиханов А. Гюлистан-ирам, Баку, 1926, с. 99-100; Броневский С. Новейшие географические и исторические известия о Кавказе, ч. 2, М., 1823, с. 378; Казикумухские и кюринские ханы (Сборник сведений о кавказских горцах, Тифлис, 1869, вып. 2, с. 8); Бутков П. Материалы для новой истории Кавказа, с 1722 по 1803 год, СПб., 1869, т. 1, с. 96.

¹² Бутков П., նույն տեղում, История, география и этнография Дагестана (ալուհետև՝ ИГЭД) XVIII-XIX вв. Архивные материалы (под ред. М. О. Косвена и Х. М. Хашаева), М., 1958, с. 107.

¹³ Броневский С., նշվ. աշխ., . ч. 2, с. 310.

նախո-դադստանյան խմբի ներկայացուցիչներ (1939 թ.-ից գրանցված են որպես դարգիններ)¹⁴: Ղայթաղները բնակվում էին Բուլամ գետի հովտում և իրենց անունը ստացել էին «Ղայթաղ» կոչվող հնագույն բնակավայրից: Ղայթաղների մի մասն էլ, բնակվելով Դարբախ գետի շրջակայքում, մոտակա սև՝ սաղարթախիտ անտառների պատճառով ստացել էր «դարադայթաղներ» (սև դայթաղներ) անվանումը:

1720-ական թթ. Դադստանում և Շիրվանում ծայր առած քաղաքական խառնակ ժամանակներին զոհ է գնում Ղուբայի Սուլթան Ահմեդ խանը: Փրկվում է միայն Ահմեդ խանի անչափահաս որդին՝ Հուսեյն Ալին, որն ապաստանում է Մամուր գետի վերին հոսանքներում գտնվող Տայիրջար կոչվող գյուղում¹⁵: Չափահաս դառնալուց հետո նա ծառայության է անցնում Նադիր շահի մոտ և կարողանում է տիրանալ Ղուբայի խանությանը:

Հուսեյն Ալի խանի մահից հետո Հյուսիսարևելյան Այսրկովկասի ղեկավարներից ամենից աչքի ընկնողը դարձավ Ֆաթհ Ալի խանը, որը ժառանգեց Ղուբայի խանությունը քսաներկու տարեկան հասակում (1758 թ.): Դեռևս 1756 թ. նա գրավել և Ղուբայի իշխանությանն էր միացրել Սադիանը¹⁶՝ Կովկասյան լեռնաշղթայի արևելյան վերջավորությունից հարավ, որը նախկինում պատկանել էր Ղուբայի խաներին¹⁷: Հետևաբար, անհիմն են ադրբեջանական պատմագրության այն պնդումները, թե Ղուբայի Ֆաթհ Ալի խանը ազգությամբ ադրբեջանցի էր, Ադրբեջանի ազգային միավորման մարտիկ կամ էլ ադրբեջանցի պետական ու քաղաքական գործիչ¹⁸:

Սադիանի իշխանության միացումը Ղուբայի իշխանությանն ուներ տնտեսական և ռազմավարական մեծ նշանակություն: XVIII դ. վերջին Սադիանը խիտ բնակեցված շրջան էր՝ շուրջ 30-ի հասնող գյուղերով¹⁹: Կուր գետում խանի՝ ձկնորսությունից ստացվող եկամուտները կազմում էին 50000 ռուբլի՝ սպիտակ արծաթով²⁰ և Սադիանի մասին կարելի էր ասել

¹⁴ Народы Дагестана, отв. ред. С. А. Арутюнов, А. И. Османов, Г. А. Сергеева, М., 2002, с. 321-322.

¹⁵ ИГЭД, с. 182.

¹⁶ Ալիշան Ղ., Տեղեկագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1855, էջ 92:

¹⁷ Гмелин С. Путешествие по России для исследования трех царств естества, СПб., 1785, 3/1, с. 58.

¹⁸ Տե՛ս Ե. Բալուև Ս. Фатали-хан Кубинский, Баку, 1942, с. 4; Абдуллаев Г. Из истории Северо-Восточного Азербайджана в 60-80 гг. XVIII века, Баку, 1958; իսլյանի՝ Азербайджан в XVIII в. и взаимоотношения с Россией, Баку, 1965.

¹⁹ Архив АН СССР, ф. 99, оп. 2, N 13, л. 28. Подробное описание Персии и государств Кабула, Сенстана, Синди, Бальха, Белуджистана, земли Хорасана, также Грузии и персидских провинций, присоединенных к России, ч. 2, М., 1829, с. 38.

²⁰ Marchall fon Bieberstein. Tableau des provinces situées sur la cote occidentale de la mer Caspienne enter les fleuves Terek et Kour: St: Petersbourg, 1798, p. 24.

«շահաստան միանգամայն ի կողմանէ ձկանց»²¹: Տիրանալով Սադիանին՝ Ղուբայի խանը հայտնվում էր Բաքվի ու Շամախիի խանությունների թիկունքում՝ թելադրելով իր քաղաքական կամքը:

Մինչ այդ, ստանալով Հուսեյն Ալի խանի մահվան լուրը՝ Շամախիի Մուհամմադ Սայիդ խանի եղբայր Ադա Ռազի բեկը, հարձակվում է սահմանամերձ Բերմանի մահալի վրա, ավերում այն և 200 ընտանիք իր հետ տանում Շիրվան: Ի պատասխան կատարվածի, երիտասարդ Ֆաթհ Ալի խանը զինված հարձակում է գործում Շամախիի վրա՝ գերեվարում 400 ընտանիք²² ու վերականգնում «հարևան այն տիրակալների հարգանքը», որոնք Հուսեյն Ալի խանի մահով Ղուբան որպես ավար էին դիտարկում²³: Այնուհետև, Ֆաթհ Ալի խանը ձեռնամուխ է լինում Դերբենդի խանության գրավմանը:

Սեֆյան պետության կազմում Դերբենդը²⁴ կառավարվում էր հաքիմի, իսկ որոշ ժամանակ անց՝ սուլթանի և նաիրի կողմից²⁵: 1722 թ. Պետրոս Մեծը գրավում է Դերբենդը և նրա յուզբաշի Իմամ Կուլի բեկը հնազանդություն է հայտնում ռուսներին՝ ստանալով գեներալ-մայորի կոչում: Սեֆյանների օրինակով, Նադիր շահն այստեղ սուլթան է նշանակում²⁶: Նադիրի մահից հետո Դերբենդի բնակիչները իշխանությունից հեռացնում են Ֆերիդուն Մուլթանին և խան են հռչակում Իմամ Կուլի խանի որդի Մուհամմադ Հուսեյնին, որը մինչ այդ զբաղեցնում էր յուզբաշիի²⁷ պաշտոնը: Սակայն նա բարձր հարկեր է սահմանում բնակիչների վրա և դաժանորեն պատժում չվճարելու դեպքում: Այս ամենը խոր դժգոհություն է առաջացնում քաղաքի բնակիչների շրջանում: Վերջիններս, զաղտնի բանակցելով Ֆաթհ Ալի խանի հետ, նրան խոստանում են հանձնել Դերբենդը²⁸:

Դերբենդը ռազմավարական մեծ նշանակություն ուներ Հյուսիսարևելյան Այսրկովկասի համար: Հնուց ի վեր այն իրավամբ համարվել էր Իրանի դարպասը, և նրա տիրակալը քաղաքական, տնտեսական ու ռազմավարական ամուր հենարան էր ստանում Հյուսիսարևելյան Այսրկովկասում: Սակայն Ֆաթհ Ալի խանը, 1760-ական թթ. կարողանում է իրեն դրսևորել որպես իսլամիստ ու հեռատես ռազմավար: Ստանալով Թարքիի շամխալի, Թաբասարանի կադիի, Ղազիկումուխի խանի և

²¹ Ջալալյանց Ս., Ճանապարհորդություններ ի Մեծն Հայաստան, մաս ք, Տիֆլիս, 1858, էջ 367:

²² Бакиханов А., նշվ. աշխ., էջ 130:

²³ Искендер-Бек-Гаджинский. Жизнь Фет-Али-хана Кубинского (Кавказ, N 48, 1847, с. 215).

²⁴ Դերբենդի մասին տե՛ս Կозубский Е. История города Дербента. Темир-Хан-Шура, 1906.

²⁵ Бутков П., նշվ. աշխ., էջ 252: Հաքիմ, նաիր, սուլթան անվանումների մասին տե՛ս Ի. Петрушевский И., նշվ. աշխ., էջ 107:

²⁶ Березин И., նշվ. աշխ., էջ 123, Броневский С., նշվ. աշխ., էջ 333, Петрушевский И., նշվ. աշխ., էջ 140:

²⁷ ИГЭД, с. 182, 209.

²⁸ Гмелин С., նշվ. աշխ., էջ 23, Бакиханов А., նշվ. աշխ., էջ 130:

Ղարաղայթաղի ուցմի Ամիր Համգայի աջակցությունը՝ Ֆաթհ Ալին ղիվանագիտական մեկուսացման մեջ էր դրել Դերբենդի խանությանը:

Չբավարարվելով այդ ամենով՝ Ղուբայի խանը դաշնակիցներ էր փնտրել ու գտել Դերբենդի բեկերի շրջանում, որոնք դժգոհ էին իրենց խանից: Ձեռնարկած այս միջոցառումները Ֆաթհ Ալի խանին հնարավորություն տվեցին «առանց կրակոցի»²⁹ 1759 թ. գրավել Դերբենդը: Քերիմ խանը, զբաղված լինելով Իրանում քաղաքական զարգացումներով, համակերպվում է Դերբենդի գրավման փաստի հետ՝ պայմանով, որ Ֆաթհ Ալի խանն իրեն պարսից պետության տիրակալ ճանաչի: Ֆաթհ Ալի խանը ղիմում է նաև օսմանյան կայսրությանը՝ հայտնելով Դերբենդի նվաճման մասին լուրը: Սուլթանը նվերներ ու բարեմաղթանքներ է ուղարկում՝ հույս ունենալով ստանալ խանի բարեհաճությունը³⁰: Ղուբայի խանը 1760 թ. հունվարին Դերբենդի գրավման մասին տեղեկացնում է նաև Աստրախանի նահանգապետին՝ հույս հայտնելով, որ ռուսական առև-տրականները կայցելեն քաղաք³¹:

Այսպիսով, Ղուբայի խանի այս գործողություններից պարզ է դառնում, որ տարածաշրջանի կիսանկախ տիրակալները նպատակ չունեին երեք տերություններից որևէ մեկից քաղաքականապես կախվածություն ունենալ և ղիմում էին խուսանավելու քաղաքականությանը: Դերբենդի գրավումից հետո Ղուբայի խանն առաջին անգամ իրեն ապահով էր զգում այդ տարածքներում³²: Հարևան խանությունների հաշվին իր տիրույթների ընդարձակման հարցը նրա համար ժամանակի խնդիր էր դառնում: Այնուհետև Ֆաթհ Ալի խանն իրականացնում է իր դաշնակցային պարտավորությունները՝ Դերբենդի խանի ունեցվածքը բաժանելով դաշնակիցների միջև: Թարքիի շամխալը Ղուբայի խանությունում ստանում է Կարաջալի, Նաբուրլի, Չիգի, Իզգալի, Բելեշլի և Բարեյի գյուղերը, իսկ ուցմին՝ Մալակալիլ գյուղը Դերբենդի խանությունում³³: Ղարաղայթաղի ուցմի Ամիր Համգային բաժին է ընկնում նաև Դերբենդի Հյուսիսային դարպասներից քաղաք մտնող և այնտեղից արտահանվող ապրանքներից գոյացող հարկերի հավաքագրման իրավունքը³⁴: Ղուբայի խանի Թարքիի շամխալին և Ղայթաղի ուցմիին առանձնահատուկ ուշադրության արժանացնելը պայմանավորված էր Դադաստանում վերջիններիս ունեցած քաղաքական դիրքով ու հեղինակությամբ և Ֆաթհ Ալի խանը պարտավոր էր հաշվի առնել այդ հանգամանքը: 1765 թ. Ֆաթհ Ալի խանը

²⁹ Искендер-Бек-Гаджинский., նշվ. աշխ., էջ 215-216:

³⁰ A General Historical and Topographical Description of Mount Caucasus. Translated from the Works of Dr. Reineggs and Marsnal Bieberstein, by Charles Wilkinson. Vol. 1, London, 1807, p. 151-152.

³¹ Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в. Сборник документов (Отв. ред. Гаджиев В., М., 1988, с. 91-92).

³² A General Gistorical and Topographical Description of Mount Caucasus, Vol. 1, p. 152.

³³ ИГЭД, с. 183; Бутков П., նշվ. աշխ., էջ 250:

³⁴ Гмелин С., նշվ. աշխ., էջ 25-26, Бутков П., նշվ. աշխ., էջ 250:

Հյուսիսարևելյան Այսրկովկասի կիսանկախ խանությունների կարգավիճակը 81
Դերբենդի խանությունը միավորում է Ղուբային և իրեն սկսում է կոչել
Դերբենդի և Ղուբայի խան:

Քաղաքական հարաբերությունները Ֆաթհ Ալի խանի և Ամիր Համզայի միջև
ամրապնդվում են ամուսնական կապերով (Ամիր Համզան Ղուբայի խանին
առաջարկում է կնության առնել իր քրոջը՝ ակնկալելով պատասխան քայլ
Ֆաթհ Ալիի կողմից): Ամուսնական դաշինք կնքելով Ղարադայթաղի ուցմիհի
հետ՝ Ֆաթհ Ալի խանը փորձում էր լուծել իր իշխանության օրինականության
հարցը: Ֆեոդալական պետության իրավունքի տեսակետից նա իշխանության
էր եկել օրինական ճանապարհով՝ ժառանգականության սկզբունքով:
Վերականգնելով Ղարադայթաղի և Ղուբայի տիրակալների իշխանության
ծագման միասնության պատմական փաստը՝ Ֆաթհ Ալին փորձում էր
«սպառնալ» հարևան տարածքների նկատմամբ սեփական
հավակնությունները: Սակայն Ղուբայի խանի քաղաքական ծրագրերի մեջ չէր
մտնում իր քրոջը Ղարադայթաղի ուցմիհին կնության տալը՝ քաղաքական ու
ռազմական երկարաժամկետ երաշխիքներ տրամադրելով Ամիր Համզային:

Այսպիսով, «ամուսնական դաշինք կնքելու» քաղաքականության միջոցով
Ֆաթհ Ալի խանը ձեռք բերեց ուցմիհի բարեկամությունը³⁵ (թեպետ հասկանում
էր դրա փիրուն լինելը) և, որոշ չափով ապահովելով իրեն հյուսիսում, հայացքն
ուղղեց դեպի հարավ՝ Բաքվի խանությունը³⁶:

Մինչև XVIII դ. սկիզբը Բաքուն ղեկավարվում էր սեֆյան շահերի կողմից
նշանակված հաքիմի կողմից: Ավելի ուշ Բաքվի կառավարիչները կրում էին
սուլթանի կոչում, որին էլ ենթարկվում էր նայիբը: Բ.Գերբերի վկայությամբ,
«որոշ պայմանագրերով», Բաքվի սուլթանը ենթակա էր Շամախիի խանին:
Հաքիմն իր իշխանությունը կիսում էր յուզբաշիի հետ. նրանք ծագումով
Գիլանից էին և Շիրվան էին ներթափանցել Խան-Ահմեդ խանի՝ 1592 թ. Աբաս
Ա-ի դեմ բարձրացրած անհաջող ապստամբության հետևանքով: Շուտով նրանք
տեղափոխվում են Բաքու, որտեղ ձեռք են բերում ժառանգական իրավունքներ
Ապշերոնի թերակղզու որոշ տարածքների վրա և ստանում յուզբաշիի
պաշտոնը: Բաքվի յուզբաշիների տոհմի սեփականությունն էր դառնում նաև
Ռամանա բնակավայրում գտնվող ամրոցը: Ռուսների կողմից XVIII դ. սկզբին
Բաքուն գրավելու հետևանքով յուզբաշի Դերգախ Ղուլի բեկը, որը
Թաբասարանի իշխանների ժառանգական տոհմից էր³⁷, իշխանությունից
հեռացնում է սուլթանին և դառնում Բաքվի կառավարիչ՝ խանի տիտղոսով³⁸:
Նադիր շահի օրոք Բաքվի խանության կառավարիչը «հասարակ

³⁵ Դադաստանում ուցմիհի քաղաքական իշխանության դերի մասին վկայում էր դեռևս XVIII
դ. սկզբին տարածաշրջան այցելած Բ.Գերբերը (ИГЭД, с. 98):

³⁶ Բաքվի խանության սահմանների մասին տե՛ս Marchall fon Bieberstein. *Tableau des
provinces situées sur la cote occidentale de la mer Caspienne entre les fleuves Terek et Kour*, p. 24.

³⁷ Бакиханов А., նշվ. աշխ., էջ 108:

³⁸ Бутков П., նշվ. աշխ., էջ 48: Բաքվի խաների մասին տե՛ս Родословная таблица
бакинских ханов (АКАК, т. 5, 1873, с. 1119).

ծագում ունեցող գիլյանցի ուն «Գալենն» էր, որը վայելում էր շահի «բարեհաճությունը»: Շահի մահից հետո Բաքուն հայտնվում է հարուստ և անվանի զինվորական Միրզա Մուհամմադ խանի (աղբյուրների համաձայն, նա եղել է ծովակալ³⁹) ձեռքերում, որին հաջորդում է որդին՝ Մելիք Մուհամմադը⁴⁰: Ֆաթհ Ալի խանն իր քրոջն ամուսնացնելով Բաքվի Մելիք Մուհամմադ խանի հետ՝ գրավոր համաձայնություն է ստանում վերջինից՝ Բաքվի խանության կողմից Ղուբայի կառավարիչներին հավերժ հնազանդություն ցուցաբերելու մասին⁴¹: Լինելով ուժեղ կամքի տեր կին՝ Հադիջա բիկեն իշխանությունից զրեթե հեռացնում է Բաքվի թուլակամ խանին և, միանձնյա կառավարելով, կյանքի է կոչում Ֆաթհ Ալի խանի քաղաքական ծրագիրը:

Բաքուն Կասպից ծովի ամենահարմար առևտրային նավահանգիստն էր⁴²: Դա Ղուբային տալիս էր կարևոր դերակատարում ռուս-իրանական առևտրում: Բացի դրանից, Բաքվի խանությունից Ֆաթհ Ալի խանը «անհավանական» քանակությամբ նավթի (մասնավորապես Բալազանում)⁴³ ու աղի հանքերից ստացվող զգալի եկամուտներ ուներ⁴⁴: Շնորհիվ Բաքվում կատարվող աշխույժ առևտրի, քաղաքը բազմազգ տարածքի էր վերածվել, ուր բնակություն էին հաստատում ողջ Կովկասից, Իրանից ու Հնդկաստանից⁴⁵: Բաքվի խանության միավորումով Ղուբայի խանը հնարավորություն էր ստանում ուղիղ կապ հաստատել Սադիանի իր տիրույթի հետ: Փաստորեն Ֆաթհ Ալի խանի օրոք Բաքվի խանությունը դարձավ նրա ընդարձակ տիրույթներից մեկը՝ դոմինիոնը⁴⁶:

Այսպիսով, Բաքվի միավորումով Ֆաթհ Ալիի ձեռքում էին կենտրոնանում Հյուսիսարևելյան Այսրկովկասի քաղաքական, տնտեսական, առևտրային ու ռազմավարական նշանակության կարևորագույն տարածքներ: Բաքվի խանությունը ենթարկել Ղուբային նշանակում էր Դերբենդից մինչև Կուր գետը գտնվող աշխարհագրական մեծ տարածքի միավորում մեկ քաղաքական ուժի ներքո: Դերբենդի, Ղուբայի և Սադիանի իշխանությունների միավորումով Ֆաթհ Ալի խանը դարձավ Հյուսիսարևելյան Այսրկովկասի ամենաուժեղ խանը՝ ձգտելով ոչ միայն միանձնյա տիրապետություն հաստատելու, այլև իշխանությունը Կուրից դեպի հարավ տարածելուն՝ իրեն ենթարկելով «ողջ Պարսկաստանը»⁴⁷:

³⁹ Cook J. *Voyages and travels through the Russian Empire, Tartary and Part of Kingdom of Persia*. Edinburgh, vol. II, Edinburgh, 1770, p. 380.

⁴⁰ Гмелин С., նշվ. աշխ., էջ 82, Бутков П., նշվ. աշխ., էջ 251, Березин И., նշվ. աշխ., էջ 215:

⁴¹ ИГЭД, с. 184.

⁴² Marchall fon Bieberstein. *Tableau des provinces situées sur la cote occidentale de la mer Caspienne enter les fleuves Terek et Kour*, p. 24.

⁴³ A General, *Historical and Topographical Description of Mount Caucasus*, Vol. 1, p. 168.

⁴⁴ Տե՛ս Гмелин С., նշվ. աշխ., էջ 83:

⁴⁵ Atkin M. *Russia and Iran 1780-1828*, Minneapolis, 1980, p. 12.

⁴⁶ A General, *Historical and Topographical Description of Mount Caucasus*, Vol. 1, p. 166.

⁴⁷ ИГЭД, с.184, Бутков П., նշվ. աշխ., էջ 253:

Հյուսիսարևելյան Այսրկովկասում Ղուբայի խանի բացարձակ մենաշնորհի հաստատման համար քաղաքական շղթայում բացակայում էր միայն Շամախին:

Շիրվանշահերի պետության անկումից հետո Սեֆյան պետության կազմում Շիրվանում ուժեղ քոչվոր ցեղերի բացակայության պայմաններում այստեղ չեն ձևավորվում ցեղային վերնախավին պատկանող ոչ ժառանգական բեկլարբեկություններ և ոչ էլ ժառանգական օլթաներ⁴⁸: Շամախիի խանը մշտապես նշանակվում էր շահի կողմից և ուղարկվում Սպահանից⁴⁹:

1740-ական թթ. վերջերին Շամախիի խանությունում քաղաքական փոփոխություններ էին տեղի ունեցել: Այսպես, Նոր Շամախիի (Աղսու) խան էր դարձել Սեֆի Նևի Ջերնավայի որդի Շիրվանի նախկին հարկահավաք Հաջի Մուհամմադ Ալին և կառավարել այստեղ մինչև 1761 թ.⁵⁰, երբ սպանվեց Հին Շամախիում հիմնավորված Ալի Վերդի խանի որդիներ Մուհամմադ Սայիդի և Աղասի խաների կողմից⁵¹: Խան Չորանի ցեղից սերկյար Ալի Վերդի բեկը, Ս.Գմելինի վկայությամբ, Նադիր շահի օրոք «պատվավոր ազնվական էր»⁵², և նրա մահից հետո իր որդիներն իրենց են ենթարկում Շիրվանի քոչվոր ցեղերին: Շուտով Մուհամմադ Սայիդը, Քերիմ խան Ջենդի ֆիրմանի համաձայն, Շամախիի խան է ճանաչվում:

Նոր Շամախիի բնակիչները դժգոհ Հաջի Մուհամմադ Ալի խանի ծանր հարկային քաղաքականությունից⁵³, դիմում են Մուհամմադ Սայիդին: Վերջինս, առանց վարանելու, կատարում է շամախեցիների խնդրանքը և գրավում քաղաքը՝ վերջ դնելով երկիշխանությանը: Շուտով Մուհամմադ Սայիդի և Ֆաթի Ալի խանի հարաբերությունները լարվում են, և վերջինս 1764 թ. արշավում է Շամախի:

Անվտանգության առումով Շամախին աշխարհագրական անհարմար դիրք ուներ, քանի որ հարևան խանությունների նկատմամբ զբաղեցնում էր կենտրոնական դիրք՝ «բաց» ու անպաշտպան սահմաններով: Պարզ էր, որ XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիսարևելյան Այսրկովկասի ռազմաքաղաքական իրավիճակում Շամախիի ինքնուրույն գոյությունը բացառվում էր: Այն կռվախնձոր էր դարձել հարևան առավել հզոր խանությունների՝ Շաքիի, Ղարաբաղի, Ղուբայի և վրացական թագավորության միջև: Շամախիի տիրակալը հնարավորություն էր ստանալու վերահսկելու Ղզլարից Բաքու ընկած տարածքները՝ իր ձեռքում կենտրոնացնելով նրա ռազմավարական, տնտեսական ու առևտրային գործառույթների մենաշնորհը՝ որպես լծակ, հարևանների վրա ճնշում գործադրելու համար: Հետևաբար, Շաքիի և

⁴⁸ Петрушевский И., նշվ. աշխ., էջ 137:

⁴⁹ ИГЭД, с. 95.

⁵⁰ Броневский С., նշվ. աշխ., էջ 429, Гмелин С., նշվ. աշխ., էջ 90:

⁵¹ Շամախիի խաների մասին տե՛ս Родословная таблица шемахинских ханов (АКАК, т. 5, 1873, с. 1109-1118):

⁵² Гмелин С., նշվ. աշխ., էջ 90-91:

⁵³ Նույն տեղում, էջ 91:

Ղարաբաղի խանությունների դեմ մղվող պայքարում Ֆաթհ Ալի խանը «պարտավոր էր» տիրանալ Շամախիի խանությանը:

Շամախին բոլոր կողմերից շրջապատված լինելով թշնամաբար տրամադրված հարևաններով և պարբերաբար ենթարկվելով լեզգիների հարձակումներին՝ ստիպված էր ճանաչել Ֆաթհ Ալի խանին որպես իր քաղաքական ու ռազմական պաշտպանի: Սակայն փառասիրությունն ու «արծաթասիրությունը» Մուհամմադ Սայիդին ստիպում են հրաժարվել Ղուբային նախօրոք պայմանավորված հարկը վճարելուց: Շամախիի խանի անհեռատես քայլը պայմանավորված էր նաև հարկատու լինելուց ազատագրվելու և լիակատար անկախություն ձեռք բերելու ցանկությամբ: Ֆաթհ Ալի խանը 1767 թ. շարժվում է Շամախի և գրավում մոտակա լեռներում գտնվող Մուջի կոչվող անառիկ ամրոցը: Մուհամմադ Սայիդ խանը հաշտություն է կնքում Ֆաթհ Ալիի հետ ու վճարում անհրաժեշտ հարկը, իսկ վերջինս վերադարձնում է գրաված ամրոցը:

Ղուբայի խանի՝ Շամախին գրավելու հետագա փորձերը պսակվում են անհաջողությամբ, քանի որ Մուհամմադ Սայիդի օգտին էր հանդես գալիս Շաքիի Հուսեյն խանը: Կարճ ժամանակ անց Շամախիի խանությունը կրկին հրաժարվում է հարկ վճարել Ղուբային: Սակայն այս անգամ Ֆաթհ Ալին ստանում է Շաքիի խանի աջակցությունը (որը մեծ ավար ստանալու հույսով էր աջակցում⁵⁴), դաշինք կնքում Դադաստանի մի շարք առաջնորդների հետ և 1768 թ. շարժվում է Շամախի ու գրավում այն⁵⁵:

1768 թ. Ֆաթհ Ալի խանի գերագույն իշխանությունն է ճանաչում Ջավաթի իշխանությունը:

Շամախիի գրավումից հետո Շաքիի խանին բաժին են ընկնում սահմանակից Սաադանի և Քասանի մահալները⁵⁶: Սակայն Ֆաթհ Ալի խանի պլանների մեջ չէր մտնում Շաքիի իշխանության հզորացումը, և նա շուտով հետ է վերադարձնում այդ մահալները: Հուսեյն խանը Շամախիի գրավումից հետո երեք ամիս մնում է Ղուբայում և, վիճելով Ֆաթհ Ալիի հետ, ձեռնունայն վերադառնում է Շաքի: Շամախիում 1769 թ. Շաքիի Հուսեյն խանի աջակցությամբ դավադրություն է կազմակերպվում Ֆաթհ Ալի խանի դեմ, սակայն վերջինիս հաջողվում է ժամանակին այն բացահայտել: Այսպիսով, Շաքիի խանի քաղաքական ծրագրերը, կապված Շամախիի հետ, չեն իրականանում, իսկ Ֆաթհ Ալի խանը որոշ ժամանակ անց վերջ է դնում դրա ձևական բաժանմանը, և 1769 թ. այն հանդես է գալիս որպես մեկ միասնական վարչատարածքային ու ֆինանսական միավոր: 1776 թ. Ֆաթհ Ալի խանը Շամախիում վերականգնում է յոթ տարի Դերբենդում գերության մեջ գտնվող Մուհամմադ Սաիդ խանի իշխանությունը: Թեև Շամախիում 1760 թ. Խան Չորանի ցե-ղը Քերիմ խան Չենդի աջակցությամբ ստանում է

⁵⁴ A General, Historical and Topographical Description of Mount Caucasus, Vol. 1, p. 192-193.

⁵⁵ Бутков П., նշվ. աշխ., էջ 253:

⁵⁶ Бакиханов А., նշվ. աշխ., էջ 132:

կառավարելու իրավունք, սակայն ավելի ուշ՝ Ղուբայի և Շաքիի ռազմական միջամտությամբ, հեռանում է իշխանությունից⁵⁷: Հաջորդ քսան տարիներին Ղուբայի խանը տիրապետող դիրքեր ուներ Շամախիում, որտեղ իշխանությունը մերթ Ֆաթհ Ալիի ձեռքում էր, մերթ՝ Խան Չոբանի ցեղի խաների⁵⁸:

Ղուբայի խանի քաղաքական ուժի մասին էր վկայում այն փաստը, որ նրան էին պատկանում Դերբենդից, Շամախիից, Սադիանից, նույնիսկ Կուր գետի ձկնորսությունից ստացվող⁵⁹ եկամուտները և հավաքագրվող հարկերի առյուծի բաժինը: Ղուբայի խանի փեսա Բաքվի խանը, ազատված էր պահանջվող տարեկան հարկից, սակայն նավթից և աղից ստացվող 35-40 հազար ռուբլի եկամուտը միայն Ֆաթհ Ալի խանի թույլտվությամբ էր տնօրինում: Ս. Գմելինը նշում է, որ նա ոչ այլ ինչ էր, քան Ղուբայի խանի հովանավորության տակ գտնվող «իշխանիկ»: Բաքվի խանն անհրաժեշտության դեպքում պարտավոր էր Ֆաթհ Ալիին տրամադրել զորքի համար պահանջվող պարենամթերք կամ նրա օգտին կատարել այլ ծառայություններ⁶⁰:

Հյուսիսարևելյան Այսրկովկասն անընդմեջ եղել է կովկասյան լեռնականների ու իրանական խաների հարձակումների թիրախ: Նադիր շահի պետության փլուզումից հետո փաստացի անկախություն ձեռք բերած քաղաքական միավորները ստիպված էին ինքնուրույն ապահովել իրենց անվտանգությունը կամ էլ միավորվել առավել հզոր ուժի հետ: Տարածաշրջանի քաղաքական պատմության զարգացման ընթացքն այդ խաներին այլընտրանք չէր թողել, և նրանցից յուրաքանչյուրը պարտավոր էր տարեկան հարկ վճարել Ֆաթհ Ալի խանին՝ որպես իրենցից «ուժեղագույնին»⁶¹:

Այսպիսով, 1750-1770-ական թթ. Հյուսիսարևելյան Այսրկովկասում՝ Դերբենդից մինչև Բաքու ձգվող տարածքում, Ֆաթհ Ալի խանի գերիշխանության ներքո ձևավորվում է ընդարձակ մի «իշխանություն»: Ադրբեջանական պատմագրությունն այդ տարածքը կոչում է «Հյուսիսարևելյան ադրբեջանական հողեր», Ղուբայի խանին համարելով դրանք միավորող, իսկ նրա քաղաքական գործունեությունը՝ «ադրբեջանական պետության» ստեղծման փորձ⁶²:

Իրականում XVIII դ. 50-70-ական թթ. Հյուսիսարևելյան Այսրկովկասի խանությունների համար կարելի է բնութագրել որպես կիսանկախ խանությունների կարգավիճակի ձևավորման ժամանակահատված: Իրանական պետության նախկին վարչատարածքային միավորները վերածվեցին ինքնուրույն պետական միավորների, իսկ Նադիր շահի օրոք սլոյալ շրջաններում վարչական, քաղաքական կամ հասարակական բարձր պաշտոններ զրաված անձինք, իրենց ձեռքերում կենտրոնացնելով

⁵⁷ Atkin M., նշվ. աշխ., էջ 17-18:

⁵⁸ Նույն տեղում, էջ 18:

⁵⁹ Гмелин С., նշվ. աշխ., էջ 115:

⁶⁰ Նույն տեղում, էջ 83-84:

⁶¹ Гмелин С., նշվ. աշխ., էջ 83:

⁶² Абдуллаев Г., նշվ. աշխ., նույնի՝ *Азербайджан в XVIII в. и взаимоотношения с Россией.*

իշխանությունը, հանդես էին գալիս որպես իրենց տիրույթների փաստացի «անկախ» տիրակալ-կառավարիչներ: Այսինքն, XVIII դ. երկրորդ կեսին ձևավորված քաղաքական իրավիճակի համատեքստում «խան» եզրույթը ենթարկվել էր իմաստային որոշակի փոփոխությունների:

Ինչպես տեսնում ենք, XVI-XVIII դդ. սկզբին Դերբենդի, Բաքվի, Ղուբայի իշխանություններում սեֆյան շահերը որպես կառավարիչ նշանակում էին հաքիմի, որը պետական պաշտոնյա էր՝ ենթակա միայն շահին: Ոչ բոլոր դեպքերում էին հաքիմները խանի կամ սուլթանի տիտղոսը կրում: Այսպես, Բաքանդեր Մունշիի 1628 թ. էմիրների ցուցակում Դերբենդի հաքիմը ուներ սուլթանի տիտղոս, ինչի համար էլ նրա անունը հիշատակվում էր այդ ցուցակում:

Մինչդեռ Բաքվի հաքիմը վերոհիշյալ փաստաթղթում չէր հիշատակվում՝ սուլթանի կամ խանի տիտղոսի բացակայության հետեվանքով: Սակայն հետագայում Բաքվի հաքիմները շահից ստացել էին սուլթանի տիտղոս և իրենց իշխանությունը վարում էին հարյուրապետի՝ յուզբաշիի հետ: Ինչ վերաբերում է Ղուբայի իշխանության կառավարչի պետական կարգավիճակին, նշենք, որ Բաքանդեր Մունշիի էմիրների ցուցակում նա չէր հիշատակվում, քանի որ միայն XVII դ. վերջում է Ղուբան ի հայտ գալիս որպես առանձին օլթա, իսկ նրա կառավարիչը ստանում է խանի տիտղոս: Շամախին Բաքանդեր Մունշիի էմիրների ցանկում չէր ներառվում, քանի որ Շիրվանի բեկլարբեկության վարչաքաղաքական կենտրոնն էր:

XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիսարևելյան Այսրկովկասի իշխանությունները ձեռք են բերում քաղաքական կիսանկախ կարգավիճակ, իսկ նրանց կառավարիչները, դուրս մնալով իրանական պետական համակարգից, իրենց հռչակում են խաներ:

Մյուս կողմից, Հյուսիսարևելյան Այսրկովկասի խաների բոլոր փորձերը՝ վարելու ինքնուրույն ներքին և արտաքին քաղաքականություն դատապարտված էին ձախողման՝ վերջիններիս ստիպելով համախմբվելու Ղուբայի խանության շուրջը, որի խանը Հյուսիսարևելյան Այսրկովկասի ռազմական անվտանգության փաստացի երաշխավորն էր: XVIII դ. երկրորդ կեսին Իրանում ծայր առած անիշխանության հետևանքով ինչպես Երևանի խանությունը չկարողացավ պահել իր անկախությունը և հարկատու դարձավ վրաց շերակլ թագավորին⁶³, այնպես էլ Հյուսիսարևելյան Այսրկովկասի խանությունները, չկարողանալով ապահովել սեփական անկախությունն ու անվտանգությունը, ստիպված ճանաչում են Ֆաթհ Ալի խանի գերիշխանությունը:

Այսպիսով, Ղուբայի խանությունից քաղաքական կախվածության փաստը Հյուսիսարևելյան Այսրկովկասի խանությունների համար դարձել էր կարգավիճակ:

⁶³ Գրիգորյան Վ., Երևանի խանությունը XVIII դարի վերջում, Ե., 1958, էջ 31:

**ФОРМИРОВАНИЕ СТАТУСА ПОЛУНЕЗАВИСИМЫХ ХАНСТВ
СЕВЕРО-ВОСТОЧНОГО ЗАКАВКАЗЬЯ (1750-1770-ые гг.)**

МХИТАРЯН Г. Ж.

Резюме

Смерть Надир-шаха привела к распаду государства на ряд полунезависимых ханств. Северо-Восточное Закавказье оказалось в гуще политических событий. Здесь также были сформированы полунезависимые политические образования (ханства). 50-70-е годы XVIII в. можно охарактеризовать как время становления новых политических единиц Северо-Восточного Закавказья. Оказавшись в сложной политической ситуации, эти ханства вели ожесточенную борьбу друг с другом за сохранение независимости. Победу в этой борьбе одержал Фетали-хан Кубинский, который диктовал свою политическую волю остальным ханствам, расположенным на обширной территории от Дербента до Баку.

**THE FORMATION OF THE STATUS OF SEMI-INDEPENDENT
KHANATES OF THE NORTH-EASTERN TRANSCAUCASIA (1750-1770s)**

G. MKHITARYAN

Abstract

After the death of Shah Nadir, independent khanates emerged from the state-khanates of his empire. Similar political procedures occurred in North-Eastern Transcaucasia, where several semi-independent khanates were formed too. The beginning of the 50-70s of the 18th century can be described as a period of formations of new units. Appearing in a complicated political situation, the khanates fought against each other to maintain their own independence. The article explores the ways and conditions due to which Phatal Khan of Khubay won the fight and imposed his political will on the powers located in the large area between Derbend and Baku.